Քաղաքացիական մասնագիտացում



Սյուզաննա Ստյոպայի Պողոսյան

Ծնվել է 17.03.1980թ.-ին Երևան քաղաքում:

1997թ.-ին գերազանցությամբ ավարտել է Երևանի թիվ 113 դպրոցը, շնորհվել է ոսկե մեդալ:

2001թ.-ին գերազանցությամբ ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատը, իսկ 2003թ.-ին՝ մագիստրատուրան:

2009թ.-ին սովորել է «Թաֆթս» համալսարանի «Ֆլեթչեր»-ի դիվանագիտության և իրավունքի դպրոցում (մասնակցել է «Միջազգային իրավունք և դիվանագիտություն» խորագրով դասընթացին):

2001-2004թթ. աշխատել է «Ֆուլ Պրես» ՍՊԸ-ում՝ որպես իրավաբան:

2004-2005թթ. աշխատել է ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի մարդու իրավունքների եվրոպական դատարանի հետ կապերի վարչությունում՝ որպես կամավոր, ապա 2005-2007թթ.՝ որպես առաջատար մասնագետ:

2007-2008թթ. աշխատել է ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանում՝ որպես դատավորի օգնական, շնորհվել է դատական ծառայության առաջին դասի առաջատար ծառայողի դասային աստիճան:

2009-2011թթ. աշխատել է ՀՀ ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմում՝ որպես իրավաբանական բաժնի պետ:

2012-2017թթ. աշխատել է «Մուլտի Գրուպ» կոնցեռն ՍՊԸ-ում՝ որպես իրավախորհրդատու:

2013թ.-ից հանդիսանում է ՀՀ փաստաբանների պալատի անդամ (փաստաբանական գործունեության թիվ 1682 արտոնագիրը կասեցված է 17.10.2017թ.-ից):

2014-2017թթ. հանդիսացել է «Լեքսարթ» փաստաբանական գրասենյակ ՍՊԸ տնօրեն:


16.10.2017-20.11.2019թթ. աշխատել է Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի աշխատակազմում՝ որպես իրավաբանական և վարույթների վարչության պետ:

20.11.2019թ.-ից աշխատում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի վարույթների և իրավական ապահովման բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար:

Մասնակցել է մասնագիտական մրցույթային դասընթացների՝ 2004թ.-ին՝ ՀՀ Կենտրոնական բանկում՝ «Կենտրոնական բանկ ներածական դասընթացին», 2010թ.-ին՝ Երևան քաղաքում Կովկասյան ինստիտուտի հիմնադրամի կողմից կազմակերպված Ժնևի համալսարանի (The Graduate Institute Geneva) «Միջազգային հարաբերություններ, մարդու միջազգային իրավունքներ և շրջակա միջավայր» դասընթացին, 2017թ.-ին՝ Ֆրանսիայում Բաց հասարակության հիմնադրամի (OSI, CPI) կողմից կազմակերպված «Մարդու իրավունքների Եվրոպական կոնվենցիա» դասընթացներին:

Տիրապետում է անգլերեն և ռուսերեն լեզուների:

Ամուսնացած է ունի մեկ որդի /30.01.2020թ.-ից ծառայում է Արցախում/ և մեկ դուստր:



Հասմիկ Գրիշայի Զաքարյան

Ծնվել է 20.06.1994թ.-ին Երևան քաղաքում:

2010թ.-ին ավարտել է Ծովակալ Իսակովի անվան թիվ 132 դպրոցը:

2014թ.-ին ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատը, իսկ 2016թ.-ին՝ մագիստրատուրան՝ գերազանցությամբ:

2016-2018թթ. աշխատել է Երևան քաղաքի Կենտրոն և Նորք Մարաշ վարչական շրջանների առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում՝ որպես դատավորի օգնական:

2018թ.-ից առ այսօր աշխատում է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում՝ որպես դատավորի օգնական:

2019թ.-ին ավարտել է ՀՀ փաստաբանական դպրոցը:

Տիրապետում է ռուսերեն և անգլերեն լեզուների, ինչպես նաև MS Office (Word, Excel, Access Power Point) համակարգչային ծրագրերի:

Ամուսնացած չէ:



Բակուր Բորիկի Գրիգորյան

Ծնվել է 08.07.1992թ.-ին Վանաձոր քաղաքում:

Սովորել է Վանաձորի Վ.Համբարձումյանի անվան թիվ 25 միջնակարգ դպրոցում:

2013թ.-ին գերազանցությամբ ավարտել է Վանաձորի պետական մանկավարժական ինստիտուտի իրավագիտության բաժինը:

2013-2015թթ. ծառայել է հայոց բանակում, իրականացրել է մարտական հերթապահություն:

2017թ.-ին ավարտել է ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա գիտակրթական միջազգային կենտրոնի իրավագիտության բաժնի մագիստրատուրան:

2019թ.-ին ավարտել է ՀՀ փաստաբանական դպրոցը:

30.05.2019-08.06.2020թթ. ՀՀ դատական դեպարտամենտի կողմից գործուղվել է Գերմանիայի Դաշնային Հանրապետություն, անցել է սեմինար-դասընթացներ Շփայերի Կառավարման գիտությունների գերմանական համալսարանում՝ վարչական իրավունքի և դատավարության վերաբերյալ տարբեր թեմաներով, մասնակցել է դատական նիստերի Քարլսրուեի վարչական դատարանում, Գերմանիայի գերագույն վարչական դատարանում:

2020թ.-ին գերազանցությամբ ավարտել է Գյումրու «Պրոգրես» համալսարանի իրավաբանական ֆակուլտետը:

2012թ.-ին Վանաձորի պետական մանկավարժական ինստիտուտի կողմից գործուղվել է ՀՀ ազգային ժողովին կից երիտասարդական խորհրդարան, 2012-2013թթ. եղել է Երիտասարդական խորհրդարանի պատգամավոր, պետահիրավական հանձնաժողովի անդամ, իրականացրել է օրենսդիր աշխատանք՝ հասարակական հիմունքներով:

16.08.2016թ.-ից առ այսօր աշխատում է ՀՀ վարչական դատարանում՝ որպես դատավորի օգնական:

2020թ.-ի առաջին ուսումնական կիսամյակում դասավանդել է Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի քոլեջում՝ որպես «Իրավունքի հիմունքներ» առարկայի դասախոս:

Ամուսնացած չէ:



Զարուհի Լևոնի Մկրտչյան

Ծնվել է 02.10.1990թ.-ին Երևան քաղաքում:

1997-2007թթ. սովորել է Երևան քաղաքի Ն.Աղբալյանի անվան թիվ 19 միջնակարգ դպրոցում:

2007-2012թթ. սովորել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի հեռակա բաժնի բակալավրիատում, իսկ 2015թ.-ին՝ նույն ֆակուլտետի հեռակա բաժնի մագիստրատուրայում:

2010-2011թթ. աշխատել է «ՀՀ Նկարիչների միության քանդակագործական կոմբինատ» ՍՊԸ-ում՝ որպես գործավար:

2013թ.-ին աշխատել է «ՄՏՍ Արմենիա» ՓԲԸ-ում՝ որպես փորձնակ իրավաբան:

2013-2014թթ. աշխատել է Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում՝ որպես դատավորի գործավար:

2015-2016թթ. աշխատել է «ՊրոԿրեդիտ Բանկ» ՓԲԸ-ում՝ որպես իրավաբան:

2016-2017թթ. աշխատել է «Հարությունյան և գործընկերներ իրավաբանական գրասենյակ» ՍՊԸ-ում՝ որպես իրավաբան:

2016-2017թթ. համատեղությամբ աշխատել է «ԷՍ-ԷՆ-ԱՐ-ՍԻ» ՍՊԸ-ում՝ որպես իրավաբան:

2016-2017թթ. աշխատել է «Պողոսյան, Կիրակոսյան և գործընկերներ իրավաբանական գրասենյակ» ՍՊԸ-ում՝ որպես իրավաբան, իսկ 01.08.2018թ.-ից առ այսօր՝ նույն գրասենյակում՝ որպես ավագ իրավաբան:

2019-2020թթ. համատեղությամբ աշխատել է «Հավատարմագրման ազգային մարմին» ՊՈԱԿ-ում՝ որպես իրավաբան:

2015թ.-ից ՀՀ փաստաբանների պալատի անդամ է:

Տիրապետում է ռուսերեն և անգլերեն լեզուների:

Ամուսնացած չէ: